



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սպասման էլ և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ասեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

185

557

57

Պատկերներ բոլոր յերկրների, միացեր.

Հ.Կ.Կ.Կ.Կ.Ի ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 3.

Խ. ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ

ՄԵՂՎԻ ՓՏԱԽՏ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Յ Ե Վ, Ն Բ Ա, Դ Ե Մ

ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Պատկերաբար)

Խմբագրությանը
Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Տպագրական տրեստի II-րդ տպարան

1924 թ.

18

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ

10. Յերիցյանի խմբագրութեամբ «Մաճկալի»
գրադարանի գյուղատնտեսական սերիայի հետեւ-
յալ **ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԲՈՒՅԿՆԵՐԸ**

1. Խ. Յերիցյան — Ինչպիսի սերմացու պիտի ցանել
(սպասված)
2. Բամբակի և կաղամբի վնասատուները. գինն և
12 կոպ.
3. Ն. Ն. Քոզգանով — Հնտանի կենդանիների քոսը,
գինն և 12 կոպ.
4. Գ. Գրանելյան — Բամբակի չոռ հիվանդութեանը
գինն և 12 կոպ.
5. Պ. Ն. Սոկոլովից — Ինչպես պետք և ~~կուլել~~ չորու-
թեան դեմ անջրգի հողերում.
գինն և 15 կոպ.
6. Պրոֆ. Պ. Կոսիչեվ — Ինչ կա հողի մեջ և ինչպիսի
հողեր են լինում. գինն և 10 կ.
7. Խս. Տեր-Ներսիսյան — Խնձորենու վնասատուները և
նրանց դեմ կովելու միջոց-
ները. գինն և 12 կոպ.

Դիմել «Մաճկալի» խմբագրութեան կամ պետական
Եկապեղիցիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ցեքս
Հառաջարան	3
I. Ի՞նչ եւ փտախտը	4
II. Ինչի՞ց եւ առաջանում փտախտը	4
III. Ինչպե՞ս եւ փտախտը տարածվում	8
IV. Փտախտի տեսակները, նրա նշանները յիվ հասկու- թյունները	12
V. Հիվանդ ընտանիքների բժշկությունը	20
VI. Ախտահանություն	28
VII. Պետք եւ կազմակերպվել	30

I ԻՆՉ Ե ՓՏԱԽՏԸ

Ինչպես ամեն մի կենդանի, այնպես ել մեզուն ունի իր հատուկ հիվանդութիւնները:

Մեզի ամենափառ ցավը փտախտն է:

Փտախտով հիվանդանում են վորդերը: Նրանք բջիջների մեջ սասնկում են և նեխում: Այդ հիվանդութեանը վորդնացավ ել են ասում:

Փտախտով հիվանդացած ընտանիքում նոր սերունդ շատ քիչ է առաջանում: Հին մեզուներն իրենց սովորական կարգով մեռնում են և նրանց փոխարինող չի լինում. այդ պատճառով ընտանիքը կամայ—կամայ նվազում է ու հանդչում:

Մի ընտանիք վոր փտախտով հիվանդացավ, ել նրան փրկութիւն չկա, ցավը նրան մաշում է ու սպանում:

Փտախտը վոր մուտք է գործում մի մեղվանոց, սկրքում յերևում է սակալաթիվ ընտանիքներում, բայց հետզհետե տարածվելով հիվանդութիւնը բռնում է վողջ մեղվանոցը և վոջնչացնում բոլոր ընտանիքներին:

Փտախտը վոր մի մեղվանոցում յերևաց, հաժառացած յեղեք, վոր գյուղի մյուս մեղվանոցներումն ել կա:

Նա տարածվում է մեղվանոցից մեղվանոց, գյուղից գյուղ, շրջանից շրջան և խեղդում է մեղվաբուծութիւնն ամբողջ յերկրում:


II ԻՆՉԻՅ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ՓՏԱԽՏԸ

Փտախտ հիվանդութիւնն առաջանում է մի տեսակ մանր եյակներից, այնքան մանր, վոր մարդու աչքին չեն յերևում: Նրանց կարելի չէ տեսնել միայն մի հատուկ

դործիքի մեջուցով, փորին մանրադիտակ կամ միկրոսկոպ են ասում

Մանրադիտակի մեջ հատուկ ապակիներ կան հարմարեցրած, փորոնք առարկան մի քանի հարյուր անգամ մեծ են ցույց տալիս: Յեթե մանրադիտակի տակ մի կաթիլ ջուր դնես, նայես, մի ասես ջրի շափ կերես, նրա մեջ հազար ու մի մանր կենդանիներ կերևան, փորոնք շարժվում են, ապրում, մեռնում:


Յերբ մանրադիտակը հնարվեց, մարդիկ նոր հասկացան, փոր իրենց տեսած կենդանիներից բացի կա մանր՝ անասանելի կենդանիների մի ամբողջ աշխարհ: Ահա այդ եյակներին մանրե կամ միկրոբ են ասում: (տես նկ. 1) *)



Նկ. 1. Սյս նկարի աջ կողմում ցույց է տրված մանրեներից ազատ առողջ վորդի հյուսքը մանրադիտակի տակ, իսկ ձախ կողմում՝ փսախսով հիվանդ վորդի հյուսքը: Նկարի վրա լերեվում են սեզ կրտսած քելիկներ, գրանի փսախսի բակտերիաներն են (բացիլներ):

*) Միկրոբների զանազան տեսակներ կան, այն միկրոբը, վոր փտախտ կամ վորդնացավ է առաջացնում՝ ասում են բացիլ կամ բակտերիա.

Փտախտի պատճառն ել այդ մանր էյակներն մի տեսակն ե, Դրա ձուն մեղվի վորդի մարմնի մեջ ընկնելով այնտեղ զանում ե իրեն համար հարմար միջավայր, այսինքն հարմար տեղ, տարություն և կերակուր: Այդտեղ նրանից ծնվում ե փտախտի բացիլը, ինչպես վոր ծխուկից ծնվում ե վորդը: Բացիլը մանրադիտակի տակ նայելիս՝ մազի կտորի նման ե յերևում. (տես նկ. 2) նրա ապ-



Նկ. 2. Մի բանի որվա սասկած վորդի հյուսք մանրադիտակի տակ: Նկարը լինե ե բացիլներով:

րելն ու մեծանալն այն ե, վոր յերկարում ե և ապա բաժանվում կտորների: Այդ կտորներից ամեն մեկը մի վորոշ ժամանակ ապրում ե, հետո կարճանում, դառնում ե փտախտի սերմ կամ ձու. դրան զխոնականները սպոր են ասում:

Սպորներից նոր բացիլներ են դուրս գալիս, յերկարում, նորից կտորների բաժանվում: Այս ձևով մանրեները բազմանում են և վորդի մարմինը կարճ միջոցում լցվում ե նրանցով:

Այդ մանրեններն ուտում են վորդի մարմնի մեջ յեղած հյութերը և քայքայում են նրան: Բացի այդ նրանք ի-

բենցից մի տեսակ թուշն են արտադրում և այդ թուշնն
եւ իր հերթին խանգարում և վորդի առողջությունը: Այս-
պիսով նրանք հիվանդացնում են վորդին և սպանում:

Յերբ վորդը սատկում և ու նեխում, մանրեներն եւ
իրենց համար կերակուր չեն դանում. նրանք զաղարում
են բազմանալուց, դանում են սպոր: (տես նկ. 3)



Նկ. 3. Փսախս հիվանդութեան բացիւնքի
սպորները (նվիկները):

Այստեղ բերած նկարներից նկ. 1 աջ կողմում ցույց և
տալիս, թե ինչպէս և յերևում մանրադիտակի տակ ա-
ռողջ վորդի մարմնից վերցրած հյութը, իսկ ձախ կողմի
վրա ցույց և տալիս, թե ինչ ձև են ունենում մանրեները
նոր սատկած վորդի մարմնի մեջ:

Յերկրորդ նկարում ցույց և տրված, թե ինչ ձև են
ունենում և ինչպէս են դասավորված լինում մանրեները
մի քանի որվա սատկած վորդի մարմնում:

Յերրորդ նկարը ցույց և տալիս, թե ինչպէս փտախ-

տի բացիչները վաղուց ստակած ու նեխած վորդի մարմնում ձեռնախափել են, դարձել սպոր:

Մեղվի փտախա հիվանդութեանն առաջացնողը ահա այդ մանրենն է (միկրոօրը). մինչև վոր այդ մանրենն չընկնի փեթակի մեջ, ընտանիքը չի հիվանդանա:

Պետք է ստել, վոր փտախա հիվանդութեան սպորը (կամ ձուռն, սերմը) ընտելան մեջ աշտակ-աշտակ վեր ընկած կա: Այդ սպորը շատ լավ դիմանում է թե ցրտին թե տաքին: Նա պատած է ամուր կեղևով և յերկար ժամանակ կարող է անմնաս մնալ, մինչև վոր մի սրատահական սրատնտով ընկնի փեթակի մեջ: Աշտակ նա գանում է հարմար միջավայր (հարմար տեղ, տաքութեան և կերակուր), ծակում է իր կեղևը, դուրս է գալիս, նորից գանում բացիլ և սկսում է ապրել, բազմանալ, ինչպես նկարագրել ենք վերևում:

III. ԻՆՉՊԵՍ Ե ՓՏԱԽՏԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ

Ասենք, որինակ փտախա հիվանդութեան մի սպոր ընկած է ջրի մեջ, սուվի սալազներում. փեթակից մի մեղու գնում է ջուր բերելու, այդ անտեսանելի սերմը ջրի հետ անցնում է մեղվի փուշիկը: Մեղուն ջուրը բերում է, այդ ջրով կերակուր շաղախում, տանում տալիս իր վորդերից մեկին: Վորդը կերակրի հետ այդ սպորը կուլ է տալիս: Վորդի փորում սպորը դարձնում է, սկսում ապրել ու բազմանալ: Վորդը հիվանդանում է ու մեռնում: Բանվոր մեղուները գալիս են, հանում նրան բջիջից ու բաշերով տանում են դուրս ձգում: Իհարկե, սպորները քափում, կաշում են թե այդ մեղուներին և թե մեղրահացերին: Մեղուները կրծում են, լիզում, մաքրում են կեղտոտ բջիջը. այդ միջոցին սպորները կաշում են նրանց ձեռ ու վտախ, լեզվին, անցնում են փորը, աղիքները: Նույն մեղուները

կերակրում են ուրիշ փորդերի ու նրանց ել փարակում: Հետո նրանք մեզը, ծաղկափոշի, ակնամամ են բերում, անապում, դարսում: Նրանք մամ են արտադրում, մամը ծամում են, մեղրահացեր շինում և այլն: Այս ձևով հիվանդութեան սերմերն ընկնում են մեզրի, մոմի, ակնամամի մեջ ու փոշի փեթակը փարակում:

Մայրը գալիս և և են հիվանդոտ բջիջներում ձու յե դնում, այդ բջիջներում դուրս յեկած փորդերը փարակվում են, հիվանդանում ու մեռնում:

Հիվանդ ընտանիքի մայրն իր մարմնում ունենում և սպորներ, այդ սրատճառով նրա ամած ձվերում հիվանդութեան բացիլներ են լինում: Այդ ձվերից դուրս յեկած փորդերն արդեն փարակված են լինում:

Այսպես հետզհետե փեթակի մեջ հիվանդութեանը սատականում և:

Կարծում եմ, փոր դժվար չե հասկանալ, թե ինչ կերպ և հիվանդութեանն անցնում փեթակից—փեթակ:

Յենթադրենք, թե մի հիվանդ ընտանիք ունենք: Այդ ընտանիքը որ-որի վրա թուլանում և և իրեն պաշտպանելու կարողութեանից զրկվում: Մյուս փեթակների մեղուները նրանից շարունակ մեզը են գողանում և գողացած մեզրի հետ հիվանդութեան սերմը տանում իրենց փեթակները ու փարակում:

Գողութեան միջոցով հիվանդութեանն անցնում և նաև հարեան մեղվանոցները:

Հիվանդ փեթակի մեղուները, պատահում և, սխալվում են ու մանում ուրիշ փեթակներ և փարակում նրանց:

Թե հիվանդ և թե առողջ ընտանիքների մեղուները միևնույն ծաղիկներից մեզը և ծաղկափոշի յեն բերում: Հիվանդ ընտանիքի մեղուն ծաղկի վրա սպորներ և թողնում, իսկ առողջ ընտանիքի մեղուն վերցնում և դրանց բերում տուն ու փարակում իր փորդերին: Ուրեմն, ծաղիկներն ել են ծառայում իբրև փարակման միջոց:

Մեղուները միևնույն տեղից ջուր են վերցնում, միևնույն ծառից ակնամում ու վարակում իրար:

Մեղուները, փորակող հիվանդութիւններից հանդած, դեն ձգված մի փեթակ կամ շրջանակ են տեսնում, այնտեղից մեղր են լիզում, տանում տուն, մոմ, ակնամում. դա ել վարակման մի գորեղ միջոց է:

Հիվանդ փեթակը վերցնելուց հետո, յեթե տեղը մի առողջը դնես, կարող է վարակվել, փորովհետե հին փեթակից մեղուներն ազրը թափած են լինում գեանի վրայերը նոր փեթակի մեղուները նույն տեղը ման են գալիս, հիվանդութիւնն սպորները կաշում են նրանց փոս ու ձեռքին, անցնում են նոր փեթակը ու վարակում:

Գիանականները համոզված են, փոր մինչև անգամ ողի միջոցով փտախտն անցնում է մի տեղից մյուս տեղը. քամին փոշու հետ տանում, ցրում է փտախտի սպորները ու վարակում նոր մեղվանոցներ:

Բայց փոշ մի դեպքում փտախտն այնպես արագ չի տարածվում, ինչպես այն դեպքում, յերբ մեղվարույծը փտախտի եյութիւնը չի հասկանում և ինքն իր ձեռքով անգիտակցաբար պատվաստում է հիվանդութիւնն առողջ ընտանիքներին:

Ահա ինչպես է նա այդ անում:

Հիվանդ ընտանիքին նայելիս նրա ձեռներին մեղր է քսվում, մոմ, անկնամում. առողջ ընտանիքներին նայելիս նա այդ վարակված մոմը, մեղրն ու անկնամոմը քամում է նրանց շրջանակներին, փեթակին:

Իր ձեռքի գործիքներն ել նրան լավ են ողնում վարակումը տարածելուն:

Հիվանդ ընտանիքը սատկելուց հետո նա նույն փեթակում նոր ընտանիք է բնակեցնում. այդպիսի դեպքերում ընտանիքներն առանց բացառութիւն հիվանդանում են:

Հիվանդ ընտանիքից հանած շրջանակներից մեղրահացը կտրելուց հանելուց հետո մեջը շեշ և կպցնում, դրնում առողջ փեթակների մեջ:

Հիվանդ ընտանիքների մեղրահացերը քամում և, դրնում առողջների մեջ:

Սոված ընտանիքներին կերակրում և հիվանդ փեթակից հանած մեղրահացերով:

Հիվանդներից վորդով լիքը շրջանակներ և հանում և տալիս և թույլերին, ուժեղացնելու համար:

Սատկած մեղուների կտավը գցում և առողջների վրա:

Հիվանդոտ մոմից շեշ և պատրաստում, տալիս և մեղուներին:

Հիվանդոտ փեթակները վոր դատարկվում են, նաբաց-բաց ձգում և այս ու այնտեղ, մեղուները նրանցից մեղր, մոմ ու անկնամում են տանում, հետն ել ցավը:

Հիվանդ մեղուներից կտրում և մեղրը, տանում տուն: Այդ մեղրով նա կեղտոտում և տան ամանները, պատ ու հատակը, դանակն ու զղալը, յերեխաների քիթ ու պուշուղը: Մեղրոտ ամանները լվանում և թափում բակը, տախտը: Այսպիսով վողջ տունը իր յեղած շեղածով, իր բնակիչներով դառնում և վարակման բուն:

Ու ահա են մեղվաբույժը, վորին նախազգուշացնելիս պատասխանում և. «Յես իմ մեղուները լավ եմ պահում, իմ մեղվանոցում փտախտ չի լինի», կամ թե. «Մեր գյուղի տեղը բարձր և, ողը մաքուր և, փտախտը չի գա» մեկել տեսար ինքն իր ձեռքով վարակումը տարածեց իր մեղվանոցում:

Ավելի մեծ հանցանք ունեն այն մեղվաբույժները, վորոնք շեշ են պատրաստում, ծախում, առանց մոմը լավ յեռացնելու: Նրանք ափսոսում են ցախին, ուղում են առանց մեծ ծախս անելու շատ փող վաստակեն. հիվանդության սերմերը այդ շեշի հետ տարածվում են մինչև

խակ շատ հետու մեղզմանոցներ: Այդ ձևով հիվանդութիւններ մի անգամից արագ կերպով բանում և բուժորովին առողջ շրջաններ:

IV. ՓՏԱԽՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱ ՆՇԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՏ-ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Պետք և ասել, Վոր փտախտը դեռ ևս վերջնականապէս ուսումնասիրված հիվանդութիւնն չէ:

Դեռ ներկայումս ել գիտնականները շարունակում են իրենց փորձերն ու գիտողութիւնները:

Այժմ արդեն պարզված է, Վոր վորդացով առաջացնող մի քանի տեսակի մանրէներ կան և այդ մանրէների ամեն մի տեսակը մի առանձին հիվանդութիւնն է առաջացնում: Այդ հիվանդութիւններին գիտնականները զանազան անուններ են տալիս, զանազան կարծիքներ են հայտնում նրանց մասին. այնպէս Վոր անփորձ մեղզարույծը կարող է շշմել, մոլորվել այս խառնաշփոթութիւնից:

Գործնական լինելու համար մենք փտախտ ենք անվանում այն բոլոր վարակիչ հիվանդութիւնները, վարունցից վռչնչանում և վորդը:

Այդ հիվանդութիւնները մի քանի ընդհանուր նշաններ և հատկութիւններ ունեն. բայց բացի այդ ընդհանուր նշաններից և հատկութիւններից՝ նրանցից ամեն մեկն ունի իր առանձին նշանները և հատկութիւնները, վարունցով տարբերվում է մյուսներից:

1. Փտախտի տեսակների ընդհանուր նշանները յեվ հատկութիւնները:

Ինչպէս վերևում արդեն ասել ենք, փտախտով հիվանդանում են վորդերը. նրանք բջիջների մեջ ստակում են և նեխում:

Բացի այդ, գիտենք նույնպէս, Վոր յերբ հիվանդութիւնը նոր է սկսվել, հիվանդ վորդերի թիվը շատ քիչ

և լինում. յերբեմն հազիվ մեկ յերկու հատ, և շատ ուշադրութեամբ պետք է նայես, փոր նրանց գտնես: Առողջ ընտանիքում կնքած փորդը միասպաղաղ և հաճախար կերպով բռնում է ամբողջ մեղրահացը, կամ նրա մի մասը, չկնքված փորդերը կանոնավոր կերպով շարված են լինում իրար կողքի, շրջանաձև, ըստ հասակի: Կնքած փորդի խուփերը (կափարիչները) ուռուցիկ են ու մաքուր գույն ունեն: Չկնքված փորդը կաթնագույն է լինում տառից և սիրուն:


Յեթե մի աշտպիսի մեղրահացի վրա կնքված փորդի մեջ մի բջիջ նկատես, փորի խուփը փոս է ընկած, և ծակված, իսկույն պիտի շփվերցնես և բջիջը բաց անես, նայես, տնայես, յեթե փորդը սատկած է ու նեխած, ուրեմն ընտանիքը հիվանդ է: Վորդի չկնքված հիվանդը թառամածի նման է լինում, յերբեմն /բծեր և ունենում վրան և իր մաքուր կաթի գույնը կորցրած և լինում: Սատկած ու նեխած փորդն իսկույն նկատվում է. նա իր ձերփոխած և լինում և պղտոր գույն է ունենում:

Յերբեմն մի առ ժամանակից հետո այդ հիվանդ փորդերն անհայտանում են, այնպես, փոր նայում ես, հացում հիվանդութեան վոշ մի նշան չես գտնում:

Ազա նորից յերևում են նեխած փորդեր և նրանց թիվը քանի գնում է, շատանում է:

Յեթե հիվանդութեան առաջին նշանները նկատված են սպրիլին՝ սովորաբար հուլիսին—հուլիսին նա արդեն բռնած է լինում փողջ փեթակը: Այդ շրջանում հիվանդութեանը նկատելը և ճանաչելը շատ հեշտ է մինչև անգամ անխորձ մեղվաբույժի համար: Նեխած փորդերի թիվը մեծ է լինում, կնքած փորդը միասպաղաղ և հաճախար կերպով չի բռնում մեղրահացը, կամ նրա մի մասը, այլ ցրվի յեկամ և լինում: Արանք-արանք շատ բջիջների խուփերը

փոս ընկած են լինում, մութ կեղտոտ դույն են ունենում և ծալված են լինում (տես նկ. 4)։ Պատահում է, վոր առողջ վորդի խուփն ել է ծակ լինում, բայց այդ ծակից վոր նայես, կտեսնես առողջ լիտիկ ու սպիտակ վորդը։ Այդ բջիջի խուփն ել փոս ընկած չի լինում, այլ ուռուցիկ։ Այդ կը նշանակի, վոր վորդը հասակի է հասել, ուզում է կնքվի, բայց դեռ իր շապիկը չի հյուսել—պրծել և մեղուները բջիջը չեն սվաղել, վերջացրել։



Նկ. 4. Փսախսով վառակված մեղրահացը։

Այդպիսի ընտանիքը յեռանդուն աշխատանք չի կատարում, չի դարդանում, մեղվի թիվը սակավ է լինում։

Այդպիսի ընտանիքները մինչև հիվանդության սաստկանալը հաճախ կարող են այնքան ուժեղանալ, վոր նույնիսկ ձագ ել կարող են տալ, մանավանդ հաջող տարիները սրանք կարող են բավական մեղր ել հավաքել։

Յերբ գլխավոր մեղրաբերքն սկսում է վերջանալ,

մեղրահացերը լցվում են մեղրով և հիվանդութիւնը պահաս նկատելի յե դառնում:

Աշունը, յերբ մայրը դադարում և ձու դնել և փեթակում փորդ չի լինում, թվում և, թե հիվանդութիւնը բոլորովին անցել է:

Այդպիսի ընտանիքը հետևյալ գարնան սկզբին առողջ ընտանիքներից քիչ և տարբերվում: Մեղուները հիվանդացած փորդերին յեռանդով դուրս են ձգում և նեխած փորդը յերբեմն փեթակում բոլորովին չես գանում. բայց առողջ ձաղը՝ առանձնապես կնքվածը, ցրված և լինում հաս ու կենտ:

Այդպիսի ընտանիքները սովորաբար աշուն չեն հասնում, թե հասնում ել են, արդյունք չեն տալիս և հանդչելու վրա յեն լինում:

Նեխած փորդերից շատերը չորանում են, կաշում բջիջի պատերին, սրանք մութ գույն են ունենում: Վաղ գարունն այդ նշանով կարելի յե համոզվել, փոր այդ ընտանիքում նախընթաց տարվանից հիվանդութիւն կա:

Բայց այստեղ մի սխալմունք կարող և լինել: Յերբեմն մեղուները ձմեռվա վերջերը կամ վաղ գարնանը փորլուծ են ունենում: Այս դեպքում նրանք ծրտում են, մեղրահացերը ապականում: Այդ ձերտը չորանում և բջիջների պատերի վրա ու իր գույնով շատ նման և լինում նեխած չորացած փորդի: Տարբերութիւնն այն և, փոր չորացած ձերտը կպած և լինում բջիջի բերանի կողմը, մինչդեռ փտախտից սատկած փորդը կաշում և բջիջի խորքին, կամ ձգվում և բջիջի պատովը մեկ: Բացի այդ փորլուծ ունեցող մեղուները ծրտում են ապականում փոշ միայն մեղրահացերը, այլև շրջանակների փայտերը և փեթակի պատերը, մինչդեռ փտախտով հիվանդ ընտանիքի փեթակի պատերը և շրջանակի ձողերը մաքուր են լինում:

Բացի վերևում բերած ընդհանուր նշաններից կան նաև

հասուկ նշաններ, վորոնցով փտախտի զանազան տեսակները տարբերվում են իրարից և վորոնց մասին կխոսենք ներքևում:

2. Քաց վորդի փտախտ (գարգանոս փտախտ)

Սրան ալ կերպ ընդունված և ասել յեվրոպական փտախտ, սակայն այս անունը միանգամայն անհիմն և, վորովհետև նա չի բնորոշում հիվանդությունը: Այդպես անվանել են նրան այն սլատճառով, վոր դիանականները նրա հետազոտությունը կատարել են առաջին անգամ Յեվրոպայում:

Այս հիվանդությունը խոցում և առաջին հերթին և զլխավորապես շկնքված վորդը:

Սրա մյուս բնորոշ նշանն այն և, վոր նեխած վորդից վատ հոտ և գալիս. դուր և ասել, թե «անելինի յուղի հոտ, քրտինքի, կամ թե նեխած խեցզեանի». սվ և այս հոտերը շափել, կշռել, վորոշել, սլարզ ի սլարզո ծանր և անախորժ հոտ և գալիս:

Ինչպես վերեն ասացինք, այս հիվանդությունը դիպչում և զլխավորապես բաց վորդին. վորդերը, սասկելով ընկնում են բջիջի հատակին ու նեխում:

Սա խոցում և նաև մայրացու և բոռացու վորդերին, մինչդեռ որ. «ամիրիական փտախտը» դրանց չի դիպչում:

Գարշահոտ փտախտը լուրջ և վտանգավոր հիվանդություն և և շատ տարածված: Նա սպառնալիք և ամբողջ շրջաններ ի մեղվաբուծությանը:

3. Կճեմ վորդի փտախտ (վորդի ժանգախտ)

Շատ ընդունված և անվանել այս հիվանդությունը «ամերիկական» փտախտ. բայց այս անունը նախկես անհիմն և, վորպես և «յեվրոպական» փտախտ անունը նախընթացի համար:

Կնքած վորդի փտախտը, ինչպես հենց իր անունից ել յերևում և, խոցում և առաջին հերթին և զլխավորապես կնքած վորդը:

Այս հիփանդությունն ասելի ճիշտ բնորոշող նշանն այն է, վոր նեխած վորդն իր ձեռ բուրբովին կորցնում է. նա դառնում է միապագադ, մածուցիկ զանգված:

Վորդը սասկելով՝ ձգվում է բջիջի պատովը մեկ, կրպչում նրան:

Չոփով անողելիս ձգվում է, յերբեմն թեկ է տալիս յերկարում. բայց յերբ զանգվածը չի սնդացել, շատ քիչ է յերկարում, այն ել բարակ մազի պես, յերբեմն համարյա աննկատելի:

Վտմանք սնդում են, վոր սա հոտ ունի, բայց յես մինչև հիմա այդ հիփանդությունից հոտ չեմ առել:

Շատ խրատական է մի դեպք իմ գործնականից: Մի անգամ իմ հարեան մի մեղվաբույժ յեկավ, թե. «Յերկու հիփանդ մեղու ունեմ»: Այդ ժամանակ մենք դեռ հիփանդություն տեսած չեյինք: Յեկանք, հավաքվեցինք 5—6 հոգի, արնաղեցինք, գննեցինք: Հոտտում ենք, հոտ չի դալիս. ձգում ենք, չի ձգվում, թեկ չի տալիս. և վորովհետև գրքերում վորոշակի տեսած եր, թե փտախից հոտ պիտի գա և վոր նեխած վորդը թեկ պիտի տա՝ ձգվի (մանավանդ այնպիս թեկ ինչպիսին նկատված է Գարբաշովի գրքում), ուստի յերկար ու բարակ վեճ ու արժուկից հետո վորոշեցինք, վոր սա փտախտ չի, չնայած վոր այս յերկու ընտանիքում ել հիփանդությունն իր զազաթնակեալին եր հասած:

Շատ չանցած, մենք լավ հասկացանք, վոր խկական փտախտը հենց դա յե և վոր գրա հետ հանաք անել չի կարելի:

Յես այնուամենայնիվ չեմ սնդում. միայն ասում եմ, վոր հոտ չգալը թող մեղվաբույժին մորթության մեջ չձգի:

Այս հիփանդությունը չի դիպչում մայրացու և բուսացու վորդերին:

Փտախտի բոլոր տեսակներից սա ամենավարակիչն է,



52841
59852

համառն ու ավերիչը: Դրա համար ե, վոր փոմանք նրան
վորդի ժանտախտ անուէնն են տալիս:

Հայաստանում ամենից շատ տարածվածը սա յէ:

4. Տոպրակավորդ

Փտախտի այս տեսակը վոշ մի հոտ չունի:

Վորդը սատկելուց հետո ել իր ձեւը չի փոխում: Նա
միայն մի փոքր թառամում ե ու սղտոր գուէն ստանում:
Բջիջից կարելի յե շոփով վորդը հանել՝ առանց նրան փրկ-
խելու: Դրա համար ե, վոր այս հիվանդությունն անվանում
են տոպրակավորդ. սատկած վորդը նմանեցնում են տոպ-
րակի, վորը լեցված ե նեխած նյութով: Նեխած վորդը
վոր փլխում ես, ջուր ե գուրս գալիս:

Այս հիվանդության մանրենն դեռ գանված չի:

Գարբաշովն ասում ե, վոր այդ հիվանդությունը շատ
տարածված ե Ղարաքլիսայի, Լոռու ե Լենինականի (Ալեք-
սանդրապոլի) շրջաններում. յես ավելացնում եմ՝ նաև Դիլի-
ջանի: Դրանից չպետք ե հետեցնել, թե մյուս շրջան-
ներում չկա:

Պարզապես մյուս շրջաններում դիտողություններ
չեն կատարված:

Այս հիվանդության ընթացքն ավելի գանդաղ ե, քան
մյուսներինը, բայց սա շատ համառ ե կորստաբեր հիվան-
դություն ե:

5. Թքու փսախս.

Այս հիվանդության ամենաբնորոշ նշանն այն ե, վոր
նեխած վորդից քացախի հոտ ե գալիս: Այդ հոտն այնքան
պարզ ե ե վորոշ, վոր սխալվել չի կարելի:

Գարբաշովը սրան լուրջ հիվանդություն չի համարում:
Յեվ անվանում ե «այսպես կոչված թթուվորդ»: Նա աս-
ում ե, վոր այս հիվանդությունը յերևում ե այն ընտա-
նիքների մեջ, վորոնք խոնավ տեղ են ձմեռել ե վորոնց
մեջ այդ պատճառով բորբոս ե առաջացել:

Պրոֆեսոր Յանդերն այդ հիվանդութիւնը «թթու փտախտ» և անվանում՝ դասելով նրան փտախտի տեսակների շարքին. և այդ հեղինակից և, վոր մենք վերցրել ենք թթու փտախտ անունը:

Յես տեսել եմ մեղվանոցներ, վորոնք հիանալի կերպով ձմեռել են և վորոնց մեջ բորբոսի նշույլ^ը ել չի յեղել, բայց այդ մեղվանոցներում թթու փտախտը խիստ տարածված էր: Հիվանդ ընտանիքներից շատերը քայքայված էյին ու նվազած: Կային ընտանիքներ, վորոնք հավանորեն վարակված էյին նախընթաց տարիանից և հունիսի վերջերին հոգեվարքի մեջ էյին:

Ուստի թթու փտախտը պիտի ճանաչել իբրև լուրջ հիվանդութիւն:

Այդ հիվանդութիւնը խիստ տարածված է յեղել Լուսիի, Ղարաքլիսայի և Դիլիջանի շրջաններում:

Հայաստանի մյուս մասերում, վորքան յես գիտել եմ, թթու փտախտ կամ բոլորովին չկա, կամ հազվագյուտ է. հավանորեն դա շորային տեղերում շատ չի տարածվում և յեթե պատահում էլ է, շատ վտանգավոր չէ:

Չնայած մեր այս նկարագրութիւններին, մեղվաբույժը շատ չպիտի շարշարվի ճշտութեամբ վորոշելու, թե իր տեսածը փտախտի վոր տեսակին է պատկանում: Այս դեպքում նա կարող է մոլորութեան մեջ ընկնել, մանավանդ, վոր հաճախ մի ընտանիքի մեջ այդ հիվանդութիւնները յերևում են միաժամանակ իրար խառնված: Նա միայն պիտի իմանա, վոր իր գիտածը փտախտի վոր տեսակն էլ լինի, լուրջ և վտանգավոր հիվանդութիւն է և անհրաժեշտ է միջոցներ գտնել նրա դեմ կռվելու:

Այստեղ պետք է հիշատակել «մրսած վորդի» մասին:

Յերբեմն գարունը հանկարծակի ցրտեր են անում և թույլ ընտանիքները կծիկ են կապում: Վորդի մեծ մասը մնում է բաց և կոտորվում: Այս դեպքը

Փատախտի հետ շօղեարք և խառնելու Յեզ գծվար էլ և խառնելու Այս գեղարում մեղուները սաստկած վորդերին գուրս են թափում, քանի գետ նրանք չեն նեխելու Սաստկած վորդերն իրենց գուրսը նկատելի կերպով չեն փոխում, նրանց նեխումնեկ արագ չի կատարվում, փլխելիս նրանցից սպիտակ կաթնազույն ջուր և գուրս գալիս:

«Մրսած վորդը» անվանուց բան է:

V. ՀԻՎԱՆԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

I. Բժշկութեան ելուքուեր

Փատախտ չտեսած մեղվարույծը, յերբ իր մեղվանոցում դանում և հիվանդութեանը, խիստ կերպով հուսահատվում է: Յետ հիշում էս, թե ինչպիսի վնասութեան և լքում տիրեց մեզ՝ Բաշքյանցի մեղվարույծներին, յերբ համոզվեցինք, վոր փատախտը մուտք և գործել մեր մեղվանոցները, չնայած վոր մենք մեծ մասամբ փորձված մեղվարույծներ էլինք և մեծ մեղվանոցներ ունեւինք:

Պետք և հաստատուրեն սնդել, վոր հուսահատվելու տեղիք չկու ճիշտ և, անախտը բան և, բայց ամեն մի մեղվարույծ, թեկուզ ուղում էլ չունենա, կարող և կուիլ արդ հիվանդութեան գետ, կարող և իր մեղվանոցը սրահագանել քայքայումից: Դրա համար հարկավոր և, վոր նա խելացի ու ճշտապահ լինի, հարկավոր և, վոր իմանա բժշկութեան ելութեանը:

Յեթե հիվանդութեանը սովյալ շրջանում առաջին անգամն և յերևում, այն էլ մեկ կամ յերկու փեթակում, ամենալափն այն և—այդ բնատանիքները փոչնչացնել: 1908 թվին յես մի հիվանդ բնատանիք գտա և անմիջապես փոչնչացրի: շրջանում հիվանդութեան բոլորովին չկար Այդ գեղարից հետո այլևս հիվանդութեան չերևաց մինչև 1912 թվականը, յերբ նա մուտք գործեց գրսից:

Այսպիսի վկայութիւններ կարելի չե բերել շատ հեղինակաւոր մեղաբարոյժների գրքերից:

Մենք տեսանք, Վոր հիւսիսեղ փեթակում գտնուող բոլոր նշութեքը՝ մեղքը, մամը, ակնամամը, ծաղկափոշին, իրենց մեջ մեծ քանակութեամբ հիւսիսեղութեան սպորներ են պարունակում,

Վորդերը՝ թե առողջ, թե հիւսիսեղ, շարժում են մեղքահացերի մեջ՝ կողք-կողքի. շատերը վարակւած են, բայց դեռ չեն սասակել, մեր աչքին առողջ են յերևում. այնպես Վոր հիւսիսեղ վորդն ու առողջը ջոկել իրարից չի կարելի. ամբողջ վորդը պետք է համարել վարակւած,

Փետակը և շրջանակները ևս ապականւած են, փորով հետև նրանց վրա կպած և վարակւած մամ, ակնամամ և մեղք. նրանց ճեղքերը մեղուները սփաղում են նույն ակնամամով ու մամով:

Ուրեմն ամբողջ փեթակն իր միջի յեղած-չեղածով վարակւած է: Պարզ է, Վոր յերբ մենք ուզում ենք ընտանիքը բժշկել, նրան պետք է հանենք իր հին փեթակից, պետք է ապատենք նրան իր մեղքից, մամից, ակնամամից, ծաղկափոշուց և վորդից: Մեղուն պետք է հրաժարվի իր վորջ հարստութեանից և գատարկ գուրս գա փեթակից:

Բայց այդ բախական չի. նա պետք է հրաժարվի նաև իր հին մորից, Հիւսիսեղութեան սպորներ մոր ձվաբաններում են ձփերում ել են լինում. ուրեմն յեթե նա մեղուների հետ գնա նոր բնակարան, հիւսիսեղ ձվեր պիտի ածի և նորից ընտանիքը վարակի:

Բայց մեղուներն ել իրենց մարմնի վրա, իրենց բերնում, աղիքներում, ունենում են սպորներ: Պետք է օրանցիկ ել ապատել մեղուներին, թե չե բժշկութեանն անդուստ կանցնի: Այդ նպատակով մեղուներին հարկաւոր է յերկու յերեք օր կարանաին պահել. այսինքն մի առան-

ձին տեղ պահել, վոր նրանց վրա յեղած սպորները թափվեն հեռանան: Սպորները յերբ վոր մեղրի կամ մամի մեջ են ընկնում, շատ յերկար մնում են նրանց մեջ վողջ և առողջ, բայց մեղուների կենդանի մարմնի մեջ նրանք յերկար չեն կարող մնալ, կենդանի մարմինը նրանց դուրս և ձգում և նրանցից ազատվում:

Վորպեսզի նրանց մարմինն ավելի հաջողությամբ մաքրվի սպորներից, դրա համար պետք է մեղուներին դեղ տալ. այնպիսի դեղ, վոր մեղուներն ուտեն և չվնասվեն, բայց նրանց փորում և աղիքներում գանվող սպորները թունավորվեն, կոտորվեն:

Ահա բժշկության ամբողջ լիմաստը:

Բնությունն էլ մեղուներին այդ կերպ է բժշկում:

Սողերայով հիվանդացած մարդը պատահում է, վոր լավանում է. բայց յերբ մեղուն է փտախտով հիվանդանում, նրան լավանալ չ'կա. և վորովհետև փտախտը խոլերայի պես չի գալիս անցնում, այլ գալիս է նստում անվերջ, ուրեմն մեղու ասած արարածը կջնջվեր, կվոճնչանար աշխարհիս յերեսից, յեթե բնությունը նրան փրկության մի միջոց տված չլիներ: Փրկության այդ միջոցը ձագ տալն է:

Ով վոր փտախտի հետ գործ է ունեցել, գիտե, վոր փտախտավոր ընտանիքներից դուրս յեկած ձագերը շատ քիչ է պատահում, վոր հիվանդանան. այդ նրանից է, վոր ձագը հրաժարվում է հին փեթակից ու նրա մեջ յեղած չեղածից ու գնում է նոր մաքուր տեղ բնակվում: Փեթակից դուրս է գալիս, մինչև նոր տեղում բնակվելը, մինչև չեչ քաղելը, մինչև ձու գնելը, նա մաքրվում ազատվում է նաև իր մարմնի մեջ յեղած սպորներից:

Ահա այդ կերպ է, վոր մեղուն բնական ճանապարհով խուսափում է փտախտից և պահպանում իր գոյությունը:

2. Գեղեր

Ինչպես տեսանք, հիվանդ ընտանիքը բժշկելիս դեղ էլ պետք է գործ ածել. բայց դեղերի վրա մեծ հույս չպետք է դնել: Տասնյակ տարիներ գիտնականները գանազան դեղեր գործածելով յեկել են այն յեզրակացութեան, վոր ամենալավ դեղը փտախտի բժշկութեան համար «Փարմալինն» է:

Փարմալինը թույն է: Այդ թույնը շատ ուժեղ կերպով ազդում է փտախտի մանրեաների վրա: Մեղուներին նա չի վնասում, յեթե չափավոր գործածես:

Փարմալինը ծախվում է թե հեղուկ դրութեան մեջ և թե բլիթներով—փոքրիկ կլորիկ կտորներով:

Փարմալինը խառնում են մեղրի ու շաքարաջրի հետ, ուտեցնում մեղուներին, վոր նրանց ներսում յեղած սպորները կտորի:

Սպորները կտորվում են նաև Փարմալինի գոլորշուց:

Յեթե Փարմալինը բաց-բաց դնես, կզգաս, վոր նրանից սուր և թունավոր հոտ է գալիս. այդ Փարմալինի գոլորշին է: Այդ գոլորշին մարդու աչքերի ու կոկորդի վրա շատ վատ է ազդում. նրանից զգույշ պիտի լինել:

Փարմալինի գոլորշիով սպորները կտորելու համար գործ են ածում մի գործիք, վորն իր հնարողի անունով կոչվում է Արխիպենկոյի լամպ (տես նկ. 5):

Այդ գործիքի մեջ մի ճրագ է դրած: Այդ ճրագում սպիրտ են վառում. ճրագի վրան հարմարեցրած է մի կլորիկ կաթսա, վորը միայն մի ծակ ունի վերևից: Այդ կաթսայի մեջ լցնում են Փարմալինի լուծվածք, վորը ճրագի բոցից սկսում է յեռալ: Գոյացած գոլորշիները հափաքելու և նրանց ուղղութեան տալու համար այդ կաթսայի ծակի վրա մի սեղինե խողովակ է հազցրած: Յերբ կաթսան յեռում է, պետք է այդ խողովակի ծայրը մըտցընել արկանոցը, վոր գոլորշին լցվի փեթակի մեջ:

Ֆարմալինի գործընթացի ստանալու համար ևս գործաժամուս
և 20 օր (քան տեղափոխումը) լուծվածք:

3. Աճեկելու գործադարձումը քրոնիկոսի մեջ

Յեթե ձեր շրջանում փաստա հիվանդությունը կա,
պետք է քթոցների վրա առանձին ուշադրություն դարձնել,
հիվանդ ընտանիքները դանել:

Քթոցների մեջ հիվանդ ընտանիքները վորոշելն ան-
համեմատ ավելի դժվար է, քան շրջանակափոք փեթակնե-
րի մեջ:

Յեթե հիվանդությունը սաստկացած է, արտաքին
նշաններից ել կարելի չէ մատուցորապես վորոշել հիվան-
դությունը:

Գլխավոր մեղրաբերքի սկզբին, յերբ մեղուները քթոց-
ներում անցնում են հեռե և սկսում են հացեր քաշել, կա-
րելի չէ նկատել հետ մնացած ընտանիքներ, վորոնք շեն
գարգանում: Այդպիսի քթոցների առաջին տախտակը պետք
է հանել և նրա մեղրահացերը նայել: Յեթե դժվար է վո-
րոշվում, պետք է մեկ յերկու մեղրահաց կարել և զննել:
Յեթե փեթակում հիվանդություն կա, առաջի յերկու-յերեք
մեղրահացի մեջ անպատճառ նրա նշանները կերևան:

Յեթե փեթակում հիվանդությունը շատ չի սաստկա-
ցել, արտաքին նշաններով չի կարելի վորոշել հիվանդ ըն-
տանիքը: Այդպիսի հիվանդներին դանելու համար պետք է
բոլոր փեթակների առաջին տախտակները հանել և առա-
ջի յերկու յերեք մեղրահացերը զննել:

Քթոցի մեջ հիվանդ ընտանիքը բժշկելը շատ դժվար
է. մինչև անգամ վնաս էլ է, վորովհետև քթոցները խիտ
առ խիտ դարսված են իրար վրա: զրա համար ել բժշ-
կություն ժամանակ շատ հեշտությունը կարելի չէ վարա-
կել մեղուներին:

Քթոցի միջից վողջ ընտանիքը քշել հանելն էլ դժվար

ե (յես ինչքան վոր փորձել եմ, վոչ մի անգամ այդ ինձ չի հաջողվել):

Մնում է միայն մի միջոց. առավոտը շուտ, յերբ մեղուն դաշտ չի թռել, քթոցն իր տեղից հանել, տանել մի առանձին սենյակ, կտրել միջի բոլոր մեղրահացերը, հանել, մեղուն թափ տալ ձաղակալի մեջ և 2—3 որ սոված պահելով՝ լցնել մի նոր, մաքուր քթոցի մեջ, մայրը սպանել և փոխարենը նորը՝ առողջը տալ: Առաջի 3—4 որը պետք է կերակրել ֆարմալին խառնած շաքարաջրով, ֆարմալինի ծուխ տալ 12 որ շարունակ, որական մեկ անգամ, ամեն անգամ 15—20 վայրկյան: Լավ կլինի, յեթե քթոցը դրվի վոչ թե հին տեղը, այլ մի հեռու, առանձին տեղ:

Այս կերպ միտք ունի անել միայն գլխավոր մեղրաբերքի սկզբներին:

Յեթե փտախար նկատված է քթոցի մեջ վաղ գարունը կամ գլխավոր մեղրաբերքի վերջին, լավն այն է, վոր մեղուները ծծմբի ծխով խեղդես, մեղրը բոլոր կտրես հանես և քթոցը մեղուներով այրես: Այդ դեպքում քթոցից 10—15 ֆունտ մեղր կստանաս. մինչդեռ յեթե սկսես բժշկել, աշխատանքդ կարող է և լավ հետևանք չտալ:

Փթախտոտ քթոցը դատարկվելուց հետո պետք է անպայման և իսկույն վառել. նա ախտահանել անհնարին է:

Հանած մեղրը պետք է յեռացնել, ապա գործածել: ձագ ունեցող մեղրահացերը և մյուս մոմի կտորաանքը հալել, դարձնել մոմ:

4. Բժշկելու գործողությունը ԵՐՉԱՆԱԿԱՎՈՐ ՓԵՐԱԿՆԵՐԻ մեջ.

Իրիկնադեմին պետք է հիվանդ ընտանիքների մայրը գտնել և վոչնչացնել:

Իրիկունը, յերբ վողջ մեղուն հավաքված կլինի, պետք

և նրան փաթաթել մի նոր ու մաքուր փեթակի մեջ առանց շեշի և վերցնել մի մուխ ու հով տեղ դնել:

Յերկու որ այդտեղ մեղվին սոված պահելուց հետո պետք է փեթակը հանել և դնել իր նախկին տեղը (ի հարկե տեղը պետք է ախտահանել, ինչպես ներքեր ասված կլինի): Ապա պետք է տալ նրան շրջանակներ շեշով, պետք է տալ նաև առողջ և յեթե հնարավոր է, բեղմնավորված մայր: Առաջին յերեք շորս որը պետք է կերակրել ֆարմային խառնած շաքարաջրով. ֆարմայինի գոլորշի պիտի տալ որումեջ, մինչև վոր վորդը կնքվի:

Հին փեթակը պետք է ախտահանել, կամ այրել, նայած թե ինչպիսի փետակ է:

Մեղրը յեռացնել և գործածել:

Մյուս մեղրահացերը և մոմի կտորտանքը հալել, մոմ անել:

Շրջանակները վառել կամ ախտահանել:

Վրայի կտավը թե հին և՛ այրել, թե նոր և՛ ախտահանել և գործածել:

Յերբ մեղվանոցում հիվանդ մեղուներ մի քանի հասկան, ափսոս է ամբողջ վորդը վոչնչացնել. ավելի լավ է 3—4 ընտանիքից վորդով շրջանակները հավաքել դնել մի հիվանդ ընտանիքի մեջ, վոր բոլոր առողջ վորդը դուրս դա մեղու դառնա, կարելի է այդ փեթակի վրա յերկու վերնահարկ դնել և այդտեղ ել վորդով շրջանակներ շարել: Բայց այդ փեթակում մայրն անպատճառ պետք է բանտարկել: Յեթե 21 որը կլրանա և ամբողջ վորդը դուրս կդա, այն ժամանակ հարկավոր է այդ ընտանիքը բժշկել այն ձևով ինչպես առաջինները:

Շատերը սովորական հիվանդներին բժշկելիս ել մորը 21 որով բանտարկում են, վոր վորդը դուրս դա հետո բժշկեն. Բայց դա սխալ բան է, դուրս յեկած մեղուների թիվն ել այնքան շատ չէ, վոր արդարացի այդ պարա-

բել արևի տակ. փորքան շատ մնան արևի տակ, այնքան լավ:

Մենք հաճախ ստիպված ենք յեղել գործ ածել ախտահանութեան մի կողմից, բայց շատ գորեղ միջոց. այդ այն է, փոր փեթակի ներսը խանձում ենք կրակով: Երա համար պետք է թանիրը վառել և փեթակը հատակով կործել (բերանքս ի վայր դնել) վրան. յերբ փեթակը կսկսի ծխալ, պետք է վերցնել և դնել արևի տակ:

Շրջանակները պետք է վառել կամ յեռացնել յերկու ժամուկես:

Մեղրը պետք է լավ յեռացնել:

Մամբ պետք է ջրի հետ յեռացնել առնվազն յերկու ժամուկես:

Փեթակի վրայի շորն ու բարձր պետք է այրել. իսկ եթե նորն են, պետք է յեռացնել յերկու ժամուկես:

Հիվանդ փեթակի տեղը պետք է բահով փորել շուռ տալ և սրսկել սուլեմայի հազկեցրած լուծվածքով, *) կամ ֆորմալինի լուծվածքով. կարելի չէ նաև յերեսը փակել շրջանցեցրած կիր:

Այդ գործողութեաններն անելիս չպետք է մամի կտորտանքը և մեղրը շաղ տալ այս կողմ այն կողմ. այդ պետք է անել մի առանձին սենյակի մեջ. Գործը վերջանալուց հետո հավաքել, ինչ վառելու չէ վառել, ինչ ախտահանելու չէ ախտահանել:

Շորերդ պիտի փոխես. ձեռներդ լվանաս սապոնով և հետո սուլեմայի լուծվածքով. ֆորմալինը դրա համար

*) Սուլեմայի հազկեցրած լուծվածք ստանալու համար հարյուր ֆունտ ջրի մեջ պետք է զցել 10 ֆունտ սուլեմա. յեղ յեռացնել, մինչև սուլեման հալվի: Երանից հետո լուծվածքը պետք է ստուցնել յեղ բամբուլ, փոր սուլեմայի չհալված կտորները կարելի լինի վերցնել հետո գործածելու համար. ձեռները լվանալու համար կարելի չէ վերցնել ավելի թույլ լուծվածք. դրա համար հազկեցրած լուծվածքի վրա կարելի չէ ավելացնել ջուր՝ մեկ բաժակին մի բաժակ:

անհարմար ե, վորովհետև փշայնում ե ձեռքերը: Չեռքիդ գործիքները սլիախ յեռայնես: Լվացվելիս ջուրը չսլիախ թափես դուրսը. մի հատուկ հոր պեռքե քանդես, լվացվես նրա մեջ, հող ածես վրան և սրսկես թույնով:

VII. ՊԵՏԲ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ

Յեթե մի հատիկ փեթակ ունենաս, այն ել հիվանդ, այս ձևով բժշկես, անշուշտ լավ հետևանք կատանաս: Բայց յերբ մի ամբողջ մեղվանոց ունես ու այդ մեղվանոցումդ հիվանդ և առողջ շարված են իրար կողքի, մինչև մեկը բժշկելը կարող ե մի ուրիշը վարակվել, մանավանդ յեթե մեղվաբույժը մի փոքր շեղում անի այս կանոններից:

Յես կարծում եմ, վոր ամեն կարգացողին հասկանալի յեղավ, թե հիվանդ ընտանիքների բժշկությունը վորքան մանրակրկիտ գործ ե, վորքան ճշտապահություն, ժամանակ և աշխատանք ե պահանջում: Շատ քիչ կգտնվեն այնպիսի մեղվաբույժներ, վորոնք հնարավորություն ունենան բոլոր պատվերներն անթերի կատարելու: Հիվանդ ընտանիքների բժշկությունը շատ դժվար ե հատկապես գեղջուկ մեղվաբույժների համար, քանի վոր այդ աշխատանքը պահանջում ե միանգամայն գիտակից վերաբերմունք և բացի այդ ազատ ժամանակ՝ դրան ամբողջովին նվիրելու համար և հաճախ վորքան նա շատ ե անաողում հիվանդ ընդանիքները, այնքան ավելի յե տարածում հիվանդությունը:

Բայց յեթե մեղվաբույժը որինակելի ճշտապահությունը ել տանի այդ աշխատանքը, դարձյալ չի կարող մեղվանոցը բոլորովին սպահովել վարակումից:

Ինչպես անես, վոր հիվանդ ընտանիքից մի մեղու սխարմամբ չմանի մի ուրիշ փեթակ. ինչպես անես, վոր առողջ ընտանիքից մեղուներ չգան մեզը գողանալու, յերբ

այդ փեթակը բացել ես, նայում ես. ի՞նչպես անես, վոր մի կաթիլ մեղր, մի վշուր մոմ չզցես գետին:

Սելացի բժշկությունն այն է, վոր հիվանդ փեթակները հեռացնես մեղվանոցիցդ զոնե 3 վերստ:

Բայց յեթե այսպես ել անես, ելի ապահով չես կարող լինել, քանի վոր հարեան մեղվանոցներից կարող ե վարակումը նորից մուտք գործել քո մեղվանոցը:

Ամենից խելացին այն կ'լինի, վոր մեղվանոցդ վերցնես տանես մի հեռու, առանձին տեղ, ուր չըջակայքում վոչ մի մեղվանոց չ'լինի:

Բայց ի հարկե, բոլորնեկ այսկերպ չեն կարող անել. դրա համար հատուկ հարմարություն է հարկավոր. հարկավոր է, վոր մարդու բան ու գործն այդ լինի:

Սակայն այդ բոլոր արգելքները և դժվարությունները վերանում են, յերբ մեղվաբույժները կազմակերպվում են և ընկերովի կռվում փտախաի դեմ:

Որինակ. յենթադրենք մի գյուղում 50 մեղվանոց կա՝ 30-ական փեթակից. ու բոլոր մեղվանոցներում ել հիվանդներ կան՝ մեկից յերկսից: Այդ 50 մեղվաբույժներն իրենց հանդի մի ծայրում մի հեռու, առանձին տեղ են ընտրում, բոլոր հիվանդ փեթակները տեղափոխում են այդտեղ: Դրանց խնամքը նրանք հանձնում են մի հատուկ մարդու վորոշ վարձատրությամբ. այդ մեղվաբույժներից ամեն մեկը 10—15 որը մեկ անգամ մանրակրկիտ կերպով իր մեղվանոցը հետախուզում է. հենց վոր հիվանդ ընտանիք են գտնում, անմիջապես տեղափոխում են հիվանդանոցը: Մեղվաբույժներն իրենց միջից մի հանձնաժողով են ընտրում, վոր հակի մեղվաբույժների վրա, վոր սրանք չթերանան, ճշտությամբ կատարեն բոլոր կանոնները. են հիվանդասպան մեղվաբույժն ընտանիքներին բժշկում է, մեղվանոցի սպարազաններն ախտահանում և մինչև աշունք իր գործը վերջացնում: Յեթե մի երկու ընտանիքում հիվան-

դաթիւնը նորոգվում ե, աշունը գրանցել փոշնչացնում
եւ Այդ ձևով գյուղն ազատվում ե փտախտից։

Բայց այս բնկերական բժշկութիւնը հնարավոր ե
միայն այն ժամանակ, յերբ մի գյուղի բոլոր մեղվա-
բույժներն ել հասկացող մարդիկ են ե բնկերովի գործ
կատարելու ընդունակ։ Մենք գիտենք, Վոր ամեն մի գյու-
ղում կգանվեն գործ խանդարող մարդիկ, վորոնց վերա-
բերմամբ պետք ե հարկադրանք գործադրել։ Այդպիսի
անգիտակից ե անտարտաճանաչ մեղվաբույժներին օրենքը
պիտի պատժի, խելքի բերի։

Յեւ այդ պատճառով փտախտն արմատախիլ անելու
համար անհրաժեշտ ե պետական օրենսդրութիւն ե վար-
քան շուտ՝ այնքան լաօ։



ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸ
ՏԵՄՆԵՆ

1. Մ. Գլուխով. — Ի՞նչ է կանաչ պարարտացույցը
և ի՞նչ սգուտ և տալիս նա.

2. Ն. Ռիժով. — Արմատապտուղների մշակութ-
թյունը անասունների համար.

Պատրաստվում են տպագրության համար
մի շարք հանրամատչելի գյուղատնտեսական
գրքույկներ.

Գիմել Կենսիոմի Ֆ.գիտբաժնի հրատարակու-
թյանը.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002739

074.

A $\frac{\text{II}}{23865}$

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ

10. Յերիցյանի խմբադրութեամբ կոմիտեւի Ազիա-
բաժնի գյուղատնտեսական սերիայի հետեյալ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ.

1. Կ. Պոպով — Վոլխարի քրտանակ հիվանդութեանը
և նրա դեմ կռիւու միջոցները
2. Կ. Մեյիք-Շահնազարյան — Դաշտային մկները և
նրանց դեմ կռիւու միջոցները
3. Խ. Տէր-Ս. վազյան — Մեղզի փախառ հիվանդութեանը
4. Յուսէֆալիան — կաթնատու կովի կերակրելն ու
խնամքը

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.